**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**27 օգոստոսի 2022թ.** **N 69-Ա**
**ք. Երևան**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԻՆԳ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 21-րդ հոդվածի 6-րդ մասով և հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրու-թյուններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (այսու-հետ` կուսակցություն) կողմից ներկայացված հինգ քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակներում (այսուհետ` վահանակ) քարոզչական պաս-տառներ տեղադրելու համար ներկայացված հայտերը, վահանակները տնօրինող կազ-մակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից տրամադրված վահանակ-ների ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է.

1. Կազմակերպությունների կողմից տրամադրված հայտերում առկա այն վահանակները և վահանակների կողմերը, որոնք իրենցից ներկայացվում են լուսադիոդային էկրան (ԼԵԴ), հանվում են վիճակահանությամբ բաշխվող վահանակների ցանկից: Սույն կետում նշված վահանակների առանձնահատկությունների հաշվառմամբ նշված վահանակները սույն որոշմամբ տրամադրվում են կուսակցութուններին հավասար հնարավորությունների ապահով-մամբ և Ընտրական օրենսգրքով սահմանված այլ կանոնների պահպանմամբ՝ առանց վիճակահանությամբ բաշխվելու:

Եթե կազմակերպությունների կողմից ներկայացված ցանկում առկա են վահանակ-ներ, որոնք հանդիսանում են լուսադիոդային էկրան (ԼԵԴ), սակայն հայտում նշված չլի-նելու պատճառով այդ մասին տեղեկությունը հայտնի չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ապա դրանց վրա տարածվում է սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված կարգավորումը, եթե անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դրանք վիճակահանությամբ բաշխել է կուսակցությունների միջև:

2. Այն վահանակները, որոնց համար դիմել է միայն մեկ կուսակցություն, այդ վահանակները տրամադրվում են տվյալ կուսակցությանը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաշվի առնելով, որ մնացած վահանակների կողմերի համար ներկայացվել են մեկից ավելի հայտեր, բոլոր վահանակների բոլոր կողմերը համարել մրցակցային վահանակներ: Վահանակները խմբավորել այնպես, որ յուրաքանչյուր խմբում ներառվեն այն վահանակները, վահանակների կողմերը, որոնց միևնույն կողմի վրա հայտ են ներկայացրել միևնույն 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 կամ 13 կուսակցություններ:

4. Հաստատել սույն որոշման 3-րդ կետով նկարագրված խմբերը և յուրաքանչյուր խմբում մրցակցող կուսակցությունները՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Սույն որոշման N 2 հավելվածով ստացված յուրաքանչյուր խմբում այդ խմբում մրցակցող կուսակցությունների միջև իրականացնել վահանակների կողմերի բաշխման վիճակահանություն այնպես, որ յուրաքանչյուր խմբում ընդգրկված վահանակների մրցակցող կողմերը հավասարապես բաժանվեն այդ խմբում մրցակցող բոլոր կուսակցությունների միջև:

Հավասարաչափ բաշխում իրականացնելու անհնարինության դեպքում խմբում առկա մրցակցային կողմերի քանակը բաշխել այնպես, որ յուրաքանչյուր կուսակցության ստացած կողմերի քանակն ավելի քան մեկով պակաս կամ ավելի չլինի խմբում ընդգրկված ամեն մի կուսակցության ստացած կողմերի քանակից:

6. Հաստատել սույն որոշման 5-րդ կետով իրականացված վիճակահանությամբ բաշխման արդյունքը՝ համաձայն N 3 հավելվածի:

7. Վահանակները տնօրինող կազմակերպությունները սույն որոշման N 1 և N 3 հավելվածներին համապատասխան պարտավոր են սահմանված կարգով պայմանագրեր կնքել:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կուսակցությունները սույն որոշման N 1 և N 3 հավելվածներին համապատասխան պարտավոր են եռօրյա ժամկետում տեղեկացնել վահանակները տնօրինող կազմակերպություններին սահմանված կարգով պայմանագրեր կնքելու կամ վահանակներից հրաժարվելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, կուսակցության կողմից պայմանագիր չկնքվելու դեպքում գովազդային վահանակը տնօրինողն ազատ է կնքելու այլ պայմանագիր՝ այդ վահանակն այլ նպատակներով օգտագործելու:

9. Սույն որոշման 8-րդ կետում սահմանված ժամկետներում ցանկացած երկու կուսակցություն կարող են միմյանց միջև փոխանակել հավասար թվով վահանակներ և տեղեկացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և համապատասխան վահանակները տնօրինող կազմակերպությանը:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

11. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. Մուկուչյան**

***Հավելված 1***
***Հայաստանի Հանրապետության***
***կենտրոնական ընտրական հանձնաժողովի***
***2022թ. օգոստոսի 27-ի թիվ 69-Ա որոշման***

| | **հ/հ** | **Մարզ** | **համայնք** | **Վահանակի գտնվելու վայրը** | **Մակերեսը (քառ.մ)** | **Վահանակի ամեն կողմի տրամադրման արժեքը 1 ամսվա համար, ՀՀ դրամով՝ ներառյալ հարկերը** | **Կողմերի քանակը** | **Կողմերի անվանումները (A,B,C ...)** | **Կոդ (Լրացնում է ԿԸՀ-ն)** | ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԿՈՒՍ. | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իմիջ Մ.Գ. ՍՊԸ | 2 | Գեղարքունիք | Ճամբարակ | Գ. Նժդեհ 1/2, քաղաքապետարանի դիմաց | 18 | 118800 | 2 | A | **011** | 1 | |
| Իմիջ Մ.Գ. ՍՊԸ | 2 | Գեղարքունիք | Ճամբարակ | Գ. Նժդեհ 1/2, քաղաքապետարանի դիմաց | 18 | 118800 | 2 | B | **011** | 1 | |
| Իմիջ Մ.Գ. ՍՊԸ | 19 | Շիրակ | Մարալիկ | Սառնաղբյուր խաչմերուկ | 18 | 108000 | 2 | A | **028** | | 1 |
| Իմիջ Մ.Գ. ՍՊԸ | 19 | Շիրակ | Մարալիկ | Սառնաղբյուր խաչմերուկ | 18 | 108000 | 2 | B | **028** | | 1 |

***Հավելված 2***
***Հայաստանի Հանրապետության***
***կենտրոնական ընտրական հանձնաժողովի***
***2022թ. օգոստոսի 27-ի թիվ 69-Ա որոշման***

| **Խումբ** | **Վահա-նակնե րի քանա կ** | **կող-մերի քա-նակ** | ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ | ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ | ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍ. | ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԿՈՒՍ. | ԴԵՊԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ | ԶՈՐԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ | ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍ | ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹ. ԿՈՒՍ | ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՊԴ ԿՈՒՍ | ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-ԹՅՈՒՆ ԿՈՒՍ | ՄԻԱՍՆԱ-ԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ (Չարենցավան) | ՄԻԱՍՆԱ-ԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ (Տաշիր) | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Խումբ 1 | 14 | 19 | | | | | | | | | | X | | | X |
| Խումբ 3 | 4 | 8 | X | | | | | | | | | | | | X |
| Խումբ 4 | 2 | 4 | | | | | | X | | | | | | | X |
| Խումբ 5 | 3 | 6 | | | X | | | | | X | | | | | X |
| Խումբ 6 | 2 | 4 | | | | | X | | | | | X | | | X |
| Խումբ 7 | 1 | 2 | | | X | | | | | X | | X | | | X |
| Խումբ 8 | 5 | 10 | | | X | | | | X | X | | X | | | X |
| Խումբ 9 | 3 | 6 | | X | X | | | | | X | X | X | | | X |
| Խումբ 10 | 2 | 4 | | | X | | | | | X | | | X | | X |
| Խումբ 11 | 3 | 5 | | | | | | | | | | X | | X | X |

*Հավելված 3*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2022թ. օգոստոսի 27-ի թիվ 69-Ա որոշման*

| Կազմակերպու թյ ան անվանու մը | Կոդ (Լրացնում է ԿԸՀ-ն) | Կողմ | ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ | ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ | ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍ. | ԴԵՊԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ | ԶՈՐԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ | ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍ | ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹ. ԿՈՒՍ | ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՊԴ ԿՈՒՍ | ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍ | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ (Չարենցավան) | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ (Տաշիր) | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 001 | A | | | | | | | | | | | | 1 |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 002 | B | | | | | | | | | 1 | | | |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 003 | A | | | | | | | | | | | | 1 |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 004 | B | | | | | | | | | 1 | | | |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 005 | A | | | | | | | | | | | | 1 |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 006 | A | | | | | | | | | | | | 1 |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 007 | B | | | | | | | | | 1 | | | |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 008 | A | | | | | | | | | | | | 1 |
| Կիսաթ բիզնես ՍՊԸ | 009 | B | | | | | | | | | 1 | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 010 | A | | | 1 | | | | | | | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 010 | B | | | | | | | | | 1 | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 012 | A | | | | | | 1 | | | | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 012 | B | | | | | | 1 | | | | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 013 | A | | | | | | | 1 | | | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 013 | B | | | | | | | 1 | | | | | |
| Խիչ ԱԳ ՍՊԸ | 014 | A | | | | | | | | | 1 | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իփիջ ԱԳ ՄԸ | 014 | B | | | 1 | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 015 | A | | | | | | | | | 1 | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 015 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 016 | A | | | 1 | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 016 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 017 | A | | | | | | | | | | | 1 | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 017 | B | | | | | | | | | | | 1 | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 018 | A | | | | | | | 1 | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 018 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 019 | A | | | 1 | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 019 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 020 | A | | | 1 | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 020 | B | | | | | | | 1 | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 021 | A | | | 1 | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 021 | B | | 1 | | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 022 | A | | | | | | | | | 1 | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 022 | B | | | | | | | | 1 | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 023 | A | | | | | | | 1 | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 023 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 024 | A | | | | | | | | | 1 | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 024 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 025 | A | | | | | | | | | 1 | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 025 | B | | | | 1 | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 026 | A | | | | | 1 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իփիջ ԱԳ ՄԸ | 026 | B | | | | | 1 | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 027 | A | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 027 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 029 | A | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 029 | B | 1 | | | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 030 | A | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 030 | B | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 031 | A | | | | | | | | | | | | 1 |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 031 | B | 1 | | | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 032 | A | 1 | | | | | | | | | | | |
| Իփիջ ԱԳ ՄԸ | 032 | B | 1 | | | | | | | | | | | |
| ԷԳԱՄԸ | 033 | B | | | | | | | | | | | | 1 |
| ԷԳԱՄԸ | 034 | A | | | 1 | | | | | | | | | |
| ԷԳԱՄԸ | 034 | B | | | | | | | | | | | | 1 |
| ԷԳԱՄԸ | 035 | A | | | | | | | 1 | | | | | |
| ԷԳԱՄԸ | 035 | B | | | | | | | | | | 1 | | |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 036 | A | | | | | | | | | | | | 1 |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 036 | B | | | | | | | | | 1 | | | |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 037 | A | | | | | | | | | | | | 1 |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 037 | B | | | | | | | | | 1 | | | |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 038 | A | | | | | | | | | | | | 1 |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 038 | B | | | | | | | | | 1 | | | |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 039 | A | | | | | | | | | 1 | | | |
| Նուշիկյ ան ԱսոցիացիաՄԸ | 039 | B | | | | | | | | | 1 | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նուշիկյան Ասոցիացիա ՍՊԸ | 040 | A | | | | | | | | | | | | 1 |
| Նուշիկյան Ասոցիացիա ՍՊԸ | 040 | B | | | | | | | | | 1 | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ | 053 | A | | | | | | | | | | | | 1 |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ | 053 | B | | | | | | | | | 1 | | | |